

կըսի.—Աստըծու բարին, Դաւիթ, իմ քեանոյցը տղէն, ձեռք քշի տակ:

Ձէ՛ որ մէր կը տիտնայ, ձին, զինք յըմեն էրուն ին, էստեղ շնոյ կը վախենայ:

Դաւիթ կըսի.—Մարէ՛, չըմ էջնայ տակ,

202. Դաւիթ, կըսի մէր, էջի տակ. մկայ զիւ անօթի՛ իս, ծարաւ իս, մէ քիչ խնայ կի, ինչ կըլնը:

—Մարէ՛, կըսի, քընէ շնորհակալ իմ. իս խնայ էլ իմ կի-
րիւր, ջիւր էլ իմ խմիր. Մէլըքին խան զի, թը խապարմ տայ-
ըս օր իս իկիր իմ, Մէլըք խօքին տառնըմ, առանց գրեօղի
էնու մախ իմ բիրիր:

203.—Դաւիթ, էսայ, քիւ ջիւջ ախպէրն ի:

—Էլի՛ իմ ջիւջ ախպէրն ի, իս դաիմ իմ ջիւջ ախպէրն ի,
համա խան զի:

էսայ —Քնիւկ ի, մեղք ի, թը քընի հալա:

էսայ.—Մ՛Ֆ, իմ գլեօխ ցաւըքի՛ր, խան զի:

204. Մէրը կըլնը, էդա գիւթնը խուփ կը դնը կրակ, տա-
քայքի, կը գնի Մէլըք զուտայ զերայ:

Մէլըքն ի, կահախի.—Էդա ինչ լիւ էր, ըծը կծից:

Էդա Մէլըք քնիւկ չէր, էդա մէրն ի, Ֆանա կէնի, խուփ
կրակայքի, զուր Դաւիթ տիտնայ, վախենայ, ըսի.—Էդ ի՛նչ
գուպայ մարդ ի Մէլըք, որ կըսի. «Ըծը լիւ կծից»:

Ապա ինչ մէր էրայ Դաւթըն, Դաւիթ ինչ էսայ մօր. Մէ-
լըք քնիւկ չի. յըշար՛ ի. յըմեն լսիր ի, գիտի:

205. Մէլըք մէկ ձեռ գրից էսա աչքը զերայ, մէկ ձեռ
գրից մըկէլ աչքը զերայ, աչքիւր սրից. սիօն ըրչկից, ախաւ
կարըձ մարդմ ի ձին խիծիր, էրընի մէջ շաղաղուիր ի, կեօ ուր
չաաըրը գիւռ կանգնիր ի. էսայ.—Էդա մըրն ի:

—Կանգնը՛, էսայ Դաւիթ, առանց մախ իս քի մախ իմ
բիրիր, առանց գրեօղ քիւ խուքին տառնըմ:

206. էսայ.—Դաւիթ, գիւ չըս թուղնըս, իս ձին խիծիմ:

էսայ.—Մէլըք, ըլի՛, ձին խիծի, իս քիւ պէս բէբադդ չըմ.
լուտայու՛ ի էլ. թէ անութի՛ իս, խնայ էլ կի, թէ ծարաւ իս, ջիւր
էլ խմի. քեօ շուրիւրն էլ հալա խաքի, քիւ թատարըք՝ ա՛խ, նիւր
էրը իմ խիւ կուի:

207. Մէրն էսայ.—Մէլըք, Դաւթըն մեղայ էրի, քեօ
ախպէրն ի: Մէլըք ըռըկաւ, էսայ.—Ձէ՛, յէս օր ի. եան իս
զԴաւիթ կոպանիմ, եան Դաւիթ ըծը:

208. Մէլըք ոնչ ջիւր խմաւ, ոնչ խայ կերաւ, ըլաւ համա
ուր ձին քեշից, խիծաւ, թուրն բռնից ձեռ:

1 Արթուն, զղատա:

2 Թրք.—Պատրաստութիւն: